

ծաւորաց, զի ուտէ՞ք զտունս աշխարհաց, պատճառանօք երկարէ՞ք զաղօթս. վասն որոյ աւելի դատաստան ընդունիցիք»:

Մարկոս ժՁ 9-20, որ Յոյն օրինակմբնում ումանց մէջ կը պակսի: «Յարուցեալ Յիսուս առաւօտուն առաջին միաշաբաթուն երեւեցաւ Մարիամու Մաղդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեւթն դէմ: Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչդեռ սղային եւ լային: Նոքա իբրեւ լուան թէ կենդանի է եւ երեւեցաւ նմա, ոչ հաւատացին»:

Յետոյ երեւեցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան: Նոքա չողան պատմեցին այլոց, եւ ոչ նոցա հաւատացին:

Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետասանքն, երեւեցաւ նոցա եւ թշնամանեաց զանհաւատութիւն նոցա եւ զխտասուրտութիւն: զի որ երեւեցաւ նոցա յարուցեալ ի մեռելոց, եւ նոքա ոչ հաւատացին:

Եւ ասէ ցնոսա, Երթալք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէ՞ք զստեարանն ամենայն արարածոց: Որ հաւատայ եւ մկրտիցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ դատապարտեցի: Նշանք այնոցիկ որ հաւատան՝ երթիցեն զհետ, այսօրիկ. յանուն իմ դեռ հանցեն, լեզուս խօսեացին, ի ձեռս իւրեանց օձս բարձցեն, եւ եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեցէ, ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն եւ բժշկեցեն:

Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համարձաւ յերկինս եւ նըստաւ ընդ աջմէ Հօր: Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեսան դործակցութեամբ, եւ զբանն հաստատէին ամենայն նշանօք, որ երթային զհետ նոցա:

Ղուկաս ԻԲ 43: «Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկինց եւ զօրացուցանէր զնա. եւ էր ի տաղնապի, եւ մտադիւրութեամբ եւս կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայալակ արեան ոլուն ոլուն հեղեալ յերկիր»:

Եւ պատճառանաւք յերկարէ՞ք զաղաթս. վ(ա)ս(ն) այսորիկ ընդունիցիք աւելի դատաստան»:

«Յարուցեալ Յիսուս առաւօտուն միաշաբաթուն, երեւեցաւ նախ Մարիամու Մաղդաղենացոյն, յորմէ հան զեւթն դէմն: Եւ նորա զնացեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին: Եւ մինչդեռ զնային եւ լային իսկ լուեալ նոցա եթէ կենդանի է տէրն: Եւ տեսին զնա եւ ոչ հաւատացին»:

Յետ այսորիկ երկուց ոմանց ի նոցանն երեւեցաւ այլակերպ ձեւով, մինչդեռ երթային յազարակ ուրեմն: Եւ նոցա երթեալ պատմեցին այլոց բազմաց: Սակայն եւ նոցա ոչ հաւատացին: Իսկ յետ այսորիկ մինչդեռ բազմեալ էին մետասան աշակերտքն՝ երեւեցաւ նոցա, եւ նախատեաց զանհաւատութիւնս նոցա եւ զխտասուրտութիւնս նոցա, քանզի տեսողացն զնա յարուցեալ ի մեռելոց ոչ հաւատացին:

Ապա ասէ ցնոսա. Գնացէ՛ք այսուհետեւ, եւ ընդ ամենայն աշխարհս քարոզեցէ՞ք զստեարանն ամենայն արարածոց: Որ հաւատայցէ եւ մկրտեցի, կեցցէ յաւիտեան: Իսկ ոչն հաւատացէ՛ դատապարտեցի: Եւ նշանքն զհետ հաւատացելոցն երթիցեն. յանուն իմ դեռ հանցեն, եւ ի նոր լեզուս խաւեսցին: Եւ ձեռաւք իւրեանց զիծս կայցեն. եւ եթէ դեղ մահաբերութեան արբցեն, մի՛ վնասեցէ նոցա: Եւ ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն եւ բժշկեցեն զնոսա:

Իսկ տէրն յետ խաւելոյ զայս ընդ նոսա՝ վերացաւ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Աստուծոյ: Եւ նոցա ելեալ քարոզեցին ընդ ամենայն երկիր, գործակից լինելով տեսուն: Եւ զբանն հաստատելով ի ձեռն նշանաց՝ որ գետն երթային. ամենքն:

«Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկինց զաւարացուցանել զնա: Եւ էր ի տաղնապի: Եւ մտադիւրացոյն եւս կայր յաղաթս: Եւ ի լինել նորա ի հզնութեան: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայալակ արեան եւ իջանէր յերկիր»:

Ղուկասի վերջը, սովորականին պէս աւարտելէ՝ յետոյ՝ կը շարունակուի. «Եւ զամենայն համառատագոյն պատմեցին, այնոցիկ ոյք եկին ընդ Պետրոսի»:

«Յետ այսորիկ ինքն յիսուս սկսեալ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու: Եւ ետ ի ձեռս նոցա զաստուածային զանապական քարոզութիւնն: Տիեզերական փրկութիւն: Ամենայն արարածոց յաւիտեանս ամէն»:

Յովհաննէս Ե. 4: «Եւ հրեշտակ Տեսուն ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զՂուրսն, եւ որ նախ ի շարժումն Ղուրսն իջանէր՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան»:

Շնացեալ կմոջ պատմութիւնը չկայ 1914ի տպագրութեամ մէջ, որով հաւաքման քիւ 94, 1483իմ գրութիւնը մէջ է: «Ամին կ'առնեմ, որում քննարկմ մէջ է: «Ամին քահանայապետքն եւ փարիսեցիքն կ'ին մի ըմբռնեալ ի շնութեան: Եւ կացուցեալ զնա առաջի, ասեն. Կինս այս ըմբռնեալ ինքն յայտնապէս շնացեալ է, եւ յարէնսն պատուիրեաց մեզ Մովսէս զայսպիսիս քարկոծ առնել. արդ զու զի՞նչ ասեն վասն դորա: Զայս ասէին փորձելով զնա, զի ունիցին ամբաստանութիւն զմանէ: Իսկ Յիսուս ի խոնարհ նայելով զբէր մատմբ յերկրի: Իսկ իբրեւ օտիպէին հարցանելով ըզնա, հայեցեալ ի վեր Յիսուս, ասէ ցնոսա. անմեղն ի ձէնը նախ նա արկցէ քար ի վերայ դորա: Եւ դարձեալ ի խոնարհ նայելով զբէր յերկրի. եւ լընեալ՝ ելանէին մի ըստ միով, սկսեալ յառաջնոցն մինչեւ ի վերջնոն. եւ մնաց Յիսուս միայն, եւ կ'ինն կայր առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Կին դու, ո՞րք են, ոչ ոք զքեզ դատապարտեաց: Իսկ նա ասէ. Ո՛չ, տէր: Եւ Յիսուս ասէ. Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ, երթ յայսմ հետէ մի՛ մեղանչեք»:

«Եւ լինէր զի իջանէր հրեշտակ Աստուծոյ եւ շարժեր Ղուր աւազանին որ ի Պրոպատիկէ: Եւ որք յայնժամ ընդ շարժել հրեշտակին իջանէին ի Ղուրն՝ վաղ՝ ժեւ հրեշտակին զբժշկութիւն: Իսկ վաղակի ընդունէին զբժշկութիւն: Իսկ զկնի իջեալ ոչ կարենէն դատանել զբժշկութիւն»:

«Իսկ քահանայապետքն եւ փարիսեցիքն անմեղն կ'ին մի ըմբռնեալ ի շնութեան: Եւ կացուցեալ զնա ի մէջ, ասեն ցնոսա. Կացուցեալ զնա այս ըմբռնեալ մեծ վարդապետ, կ'ինս այս ըմբռնեալ ի շնութեան: Եւ յարէնսն Մովսէս պատուիրեաց ի շնութեան, քանզի ասեն վասն սորա: Զայս ասացին փորձելով զնա: Զի դատանիցն շարախաւութիւն զմանէ:

Եւ Յիսուս խոնարհ հայելով, մատմբ քերի ի գետնի: Եւ իբրեւ օտիպէին հարցանել ցնա: Եւ Յիսուս ի վեր հայելով ասէ ցնոսա. Որ ոք անմեղն է ի ձէնը, արկցէ քար ի վերայ դորա: Եւ դարձեալ խոնարհեալ, զբէր ի գետնի:

Եւ իբրեւ զայս լուան, ելին ամենքն՝ քան մի ըստ միով ի տաճարէն՝ սկսեալ ի քահանայապետիցն: Մնաց միայն կ'ինն առ Յիսուս: Ի վեր հայեցեալ Յիսուս ասէ ցնա. Կին դու, ո՞րք են. զի ոչ ոք դատապարտեաց զքեզ:

Ասէ ցնա կ'ինն, եւ Ոչ ոք, տէր: Ասէ ցնա Յիսուս. Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ: Երթ, յայսմ հետէ մի՛ մեղանչեք:

Դարձեալ խաւեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. ես եմ լոյս աշխարհի. որ դայ զհետ իմ՝ ի խաւարի մի՝ մնասցէ, այլ ընկալցի զլոյս կենաց:

Յետոյ՝ տաքակաց հատուած մը.
«Զի գիտեմ ուստի եկի եւ յո՛ւ երթամ»:

Դարձեալ խաւեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ:

Ես եմ լոյս աշխարհի: Որ հաւատա յիս՝ ընդ խաւար մի՛ դնասցէ, այլ ընկալցի զլոյս կենաց:

Զի գիտեմ ուստի եկի եւ յո՛ւ երթամ:
Բայց դուք ոչ գիտէք ուստի եկի կամ յո՛ւ երթամ:

Անտարակոյս՝ տարբերութիւնները ըստ կամս չէ որ տեղի դտած են: Կարելի է խորհիլ որ Հայ-Հոռոմ մը, բուն Ոսկեդարեան բնագիւղը վերստին համեմատած է յոյն բնագիւղին հետ, եւ իր նկատած տարբերութիւնները նշանակած է այս թիւ 99ի դրչութեան մէջ:

Տեսանք որ Աւետարանին ստացող եւ մեկենաս Կողմանները սոյլորական կրօնաւորներ չէին: Անոնցմէ մին մանաւանդ հեղինակած է կամ կազմած ժամակարգութիւն եւ Յայսմաւուրք, ըստ իրենց յարանունութեան, թէեւ հայերէն:

Հաւաքմանս թիւ 99 Աւետարանը, ուրեմն, մեծ կարեւորութիւն կը ստանայ իր պարունակութեամբ եւ յաւելուածներով՝ Հայ-Հոռոմ հոսանքին ուսումնասիրութեան համար: Ասկէ զատ, որքան որ գիտեմ՝ հնագոյն Հայ-Հոռոմ ձեռագիրն է, ներկայիս ծանօթ (1203 թուականէն):

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԽՈՀԵՐ

Կ. Կ. ՊԼԱՏՈՆՈՎԻ

«ՓԱՍՏԵՐ ՈՒ ՄՏՔԵՐ» ՈՒ ՄԱՍԻՆ

Պէտք է ընդունիլ որ Կ. Կ. Պլատոնովը հաճելի գրող է եւ միեւնոյն ատեն հոգեբան, մանաւանդ թէ ճիշտ իբրեւ հոգեբան է որ կը ներկայանայ մեզի՝ իր «Կրօնի Հոգեբանութիւնը» երկասիրութեան մէջ, որ թարգմանուելով հայերէնի՝ վերջերս լոյս տեսած է Երեւան¹:

Գիտական ծանր հանդերձանքէ գերծ, բայց գիտական անառարկելի յաւակնութիւններ ունեցող այս գիրքը սահմանուած է ժողովուրդի լայն խաւերուն, եւ թարգմանիչին իսկ խօսքերով՝ «օգտակար է լինի ոչ միայն պրոպագանդիստներին՝ եւ գիտական աթիւղմի ու հոգեբանութեան պրոբլեմներով հետաքրքրուողներին, այլեւ հաւատացեալ ընթերցողին»²:

Ոճը՝ գիտնական մարդու յատուկ հանդարտութեամբ ու վստահութեամբ օժտուած, գերծ է հոգեբանական կամ հակահոգեբանական դարձումներէ: Շուրջ երեքհարիւր էջոց այս գիրքը կը բաղկանայ վեց գլուխներէ. առաջինին մէջ՝ հեղինակը լուսաբանութիւններ կու տայ իր գիրքի մասին, կը թուէ անոր գրգռապատճառները, կը խօսի կրօնքի ընդհանուր հոգեբանութեան շուրջ. երկրորդ գլուխը նուիրուած է կրօնքի հոգեբանական արմատներուն ուսումնասիրութեան. երրորդին մէջ՝ կը բնորոշէ հաւատքի հոգեբանութիւնը, իսկ չորրորդին մէջ՝ աղօթքի հոգեբանութիւնը. հինգերորդ գլուխը կը կեդրոնանայ կրօնական մնացուկներու հոգեբանութեան վրայ: Հուսկ՝ վերջին գլուխը, որուն խորագիրն է. «Մի հայեացք դէպի ապագան», ուր հեղինակը՝ իր սրտես հայեացքը ուղղած դէպի ապագան, դէպի համայնավարութեան կատարեալ յաղթանակը, այնտեղ կրօնքի եւ Աստուծոյ համար տեղ չի նշմարեր:

1. Կ. Կ. ՊԼԱՏՈՆՈՎ, Կրօնի Հոգեբանութիւնը (Փաստեր եւ մտքեր), թրգմ. Մ. Վ. ԱՐԻՍՏԱԿԵՍԵԱՆ, Երեւան, «Հայաստան» հրատ. 1974, էջ 293:

2. Անդ, էջ 2: